

ՀՏԴ 327.8

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՈՒՐԲՈՒԼԵՆՏՈՒԹՅՈՒՆ.
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՆՈՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՄԱՄԻԿՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում հիմնավորվել են գլոբալացման և գլոկալացման ներկայիս զարգացումների՝ հիբրիդային պատերազմների, աշխարաքաղաքական փոփոխությունների, ահաբեկչության, COVID- 19-ի դեմ մղվող պայքարի, ինչպես նաև տեղեկատվահաղորդակցական արդի տեխնոլոգիաների նպատակամետ գործառնանր զուգահեռ քաղաքական տուրբուլենտության բազմավեկտորությունը: Այս համատեքստում առաջարկվում է **քաղաքական տուրբուլենտություն** ուսումնասիրել ոչ միայն որպես մարտահրավեր, այլև որպես հասարաքաղաքական կյանքի բնականոն արդիականացման հնարավորություն: Հեղինակները համոզված են, որ նմանօրինակ մոտեցմամբ կարելի է բացահայտել քաղաքական զարգացման ճգնաժամերի քայքայիչ ազդեցությունը պետական կառավարման, ազգային անվտանգության, տնտեսության, էկոլոգիայի, իրավունքի և նույնիսկ բարոյականության վրա: Այս դիտանկյունից առաջարկված է ՀՀ-ում տուրբուլենտություն երևույթը համապարփակ ուսումնասիրել գիտավերլուծական հարացույցի օգնությամբ՝ կարևորելով քաղաքական խոսույթի (**դիսկուրսի**) ռազմավարական բնույթը: Միաժամանակ զարգացվում է թեզ, որ ՀՀ-ում «գիտավերլուծական» հարացույցը հնարավոր է իրականացնել, միայն հավաքագրելով ռազմավարական մտածողություն ունեցող ներաժին ընտրանու այն ուժերին, որոնք կարող են բնականոն արդիականացման միջոցով՝ իրականագնել հանրային, պետական, ազգայի շահերի կոնվերգենցիայի, սոցիալական պատասխանատվության, հանրային համակեցության և ռազմավարական անվտանգ ապագայի քաղաքականություն:

Բանալի բառեր. քաղաքական տուրբուլենտություն, մարտահրավեր, հնարավորություն, աշխարհաքաղաքականություն, բնականոն արդիականացում, ռազմավարական մտածողություն, անորոշություն, մանիպուլյացիա, ներաժին ընտրանի (**ինդոգեն էլիտա**):

Քաղաքական տուրբուլենտության էությունը, բնույթը և կառուցվածքը

ԻՍՀԱՄ-ի փլուզումից հետո «**RAND Corporation**» ուղեղային կենտրոնը հանրագումարելով աշխարհում տեղի ունեցած արմատական փոփոխությունները՝ ամերիկյան քաղաքագետներ Զ. Բժեգինսկու և Զ. Ռոսենաուի ղեկավարությամբ, քննարկեց ժամանակի մեջ անորոշությամբ հագեցած

փոփոխություններն ուսումնասիրել «տուրբուլենտություն (լատ. turbulentus անկանոն, փոթորկոտ, խառնաշփոթ)» հասկացության օգնությամբ անհրաժեշտությունը: Այս դիտանկյունուց կարևորվեց տուրբուլենտությունը ոչ միայն որպես ֆիզիկական (հիդրոդինամիկական և թերմոդինամիկական), այլև սոցիալական և քաղաքական կյանքում խառնաշփոթություն առաջացնող երևույթների բնութագրման համար: Արդեն, 1990 թվականին ԱՄՆ քաղաքագետ Ջեյմս Ռոսենաուն առաջին անգամ օգտագործեց «**քաղաքական տուրբուլենտություն**» հասկացությունը՝ որպես գլոբալ և լոկալ կառավարման համակարգը լարվածության և աններդաշնակ ապակառուցողական փոփոխությունների մեջ պահող երևույթ, որի հետևանքով գլոբալ քաղաքականությունը, մակածելով անկայունություն, պարբերաբար վերակառուցվում է անորոշության մեջ [1, p. 5-6]: Ըստ Ռոսենաուի՝ գլոբալ քաղաքականությունը թևակոխել է զարգացման այնպիսի փուլ, որի պերմանենտ տատանումներն ուղեկցվում են գործող կառույցների կազմաքանդմամբ, իսկ նոր գործընթացների հետևանքով ազգային քաղաքական համակարգը մտնում է երկարատև անհավասարակշռության և անկայունության շրջան: Ռոսենաուն առանձնացրեց ազգային քաղաքական համակարգի չափորոշիչները փոփոխող հինգ հիմնական պատճառ.

1. համաշխարհային կարգի անցումն արդյունաբերական համակարգից հետարդյունաբերականի. զարգացան տեխնոլոգիաները և տեխնիկական պայմանավորում են փոփոխման տրամաբանությունը,

2. անդրազգային բնույթ ունեցող այնպիսի երևույթների առաջացում, ինչպիսիք են ահաբեկչությունը, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, էկոլոգիական, արժույթային ճգնաժամերը և ՁԻԱՀ-ը,

3. պետությունների անկարողությունն արդյունավետորեն լուծելու հիմնական քաղաքական խնդիրները, քանի որ դրանք միահյուսվելով միջազգայինի հետ գտնվում են իրենց իրավասություններից դուրս,

4. ապակենտրոնացման միտումների համատարած տարածում բոլոր կազմակերպչական մակարդակներում,

5. բնակչության կողմից աշխարհընկալման փոփոխություն և վերլուծական կարողությունների մեծացում, ինչը հարմարվում է նոր տեխնոլոգիաների պայմաններում փոխկախվածության աճ [1, p. 33-35]:

Այս փոփոխականները քաղաքական տուրբուլենտության ուսումնասիրության մեջ մեծ դեր են խաղում, քանի որ պայմանավորված նոր ազատականության (**նեոլիբերալիզմի**) խոստացած բարեփոխումների, սոցիալական և տնտեսական ոլորտների ձևական կատարելագործմամբ, արդի հասարակությունները մտել են զարգացման նոր փուլ, որի բնորոշիչը կապիտալի բևեռացումն է [2, c. 29]: Տուրբուլենտության պայմաններում Արևմուտքից ունեցած ուժեղ կախվածությամբ և ներքաղաքական ռիսկերի

համապատասխան աճի պայմաններում պետություններն անընդհատ բախվում են ռիսկերի, համակարգային ճգնաժամերի, որոնք էլ հիմնականում, ստեղծելով նոր որակի տուրբուլենտ ալիքներ, առավել քան հնարավոր են դարձնում «սև կարապների» հայտնվելը [3, c. 57]: Կերչիններիս օգնությամբ գլոբալացվող աշխարհի դերակատարներն ուժեղացնում են **տրանսնացիոնալիզացիոն ցանցային փոխգործունեությունը**:

Այս դիտանկյունից էլ արդի քաղաքական գործընթացները բնութագրվում են որպես «քառսային, փոթորկոտ և տագնապալի» [4, c. 4-5]: Ավելին, հետազոտողները հաճախ այն որակում են աշխարհաքաղաքական հեղափոխություն, երբ, օրինակ, խոսում են «տուրբուլենտացված սահմանների» մասին. Ենթադրելով՝ նախ՝ ուժային կենտրոնների միջև հարաբերությունների փոփոխություն՝ ապա՝ ազգային պետություններում **մի սահմանադրությունից անցում մյուսին, կամ գոյություն ունեցող սահմանադրության բարեփոխում**: Այս ամենը դիտարկվում է տնտեսական և սոցիալ-մշակութային, բարոյահոգեբանական այն գլխապտույտ վերափոխումների տիրույթում, որոնք «էրոզիայի» են երթարկում պետությունների սահմանները՝ ստեղծելով բազմաչափ սպառնալիք ընդարձակված օրակարգով ազգային անվտանգության ապահովման համար: Ըստ քաղաքագետ Հ. Մաուլի՝ տուրբուլենտությունը, որպես գլոբալացման հետևանք ունի համապարփակ զարգացման երեք միտում՝ **աշխարհաքաղաքականության գերիշխանություն, գլոբալ անվտանգության խնդրի մուտագիա, տարբեր գաղափարախոսությունների և արժեքային համակարգերի միջև հակամարտությունների ինտենսիվ աճ** [5]: Նշված միտումների տիրույթներում այն ծնում է քաղաքական գործընթացների այնպիսի քառսային շարք, ինչպիսիք են՝ ահաբեկչությունը, ծայրահեղականությունը, ազգային և ռասսայական թշնամանքով պայմանավորված պատերազմները, զանգվածային միգրացիան, ընտրանու դեմ ուղղված տրամադրություններով հագեցած հեղափոխությունները: Տուրբուլենտության դերակատարների (պետություններ, միջազգային կազմակերպություններ, անդրազգային կորպորացիաներ, քաղաքական և հանրային գործիչներ) շահերի շրջանակներում ձևավորված անորոշությունները դարձել են անվտանգային, քաղաքական, ռազմական, լրագրողական, տնտեսական և առօրեական խոսույթների բաղադրիչ: Այս համատեքստում քաղաքական տուրբուլենտությունը, որպես բազմամաչափ մարտահրավեր, ուղված է ազգային անվտանգությանը, արդյունքի կառավարմանը, ռազմավարական ապագային, քանի որ անգործունակ է դարձնում միջազգային իրավունքը, իսկ ազգային քաղաքական գործընթացները բնութագրվում են որպես «տագնապալի տուրբուլենտությամբ օժտված» երևույթ [1, p. 15]: Այսօր անորոշության և անկանխատեսելիության հետ ասոցացվող տուրբուլենտությունը ստիպում է որ արդի հասարակությունը պատրաստ լինի անընդհատ

ապրել «սև կարապների» մեջ և կանխատեսել ապագան: Այս իմացության մբ էլ անցումային երկրների քաղաքական գործընթացներում անհրաժեշտ է նախ հստակեցնել քաղաքական խոսույթի վարման տեսական և գործնական կիրառելիության բազմավեկտորությունը, ապա իսկության մեջ վերլուծել արդի գլոբալ իրողությունները: Իրականության նմանօրինակ ընկալումն ստեղծում է տեղեկատվահաղորդակցական մի տիրույթ, որի սահմաններում բացահայտվում է մարդկանց ակնկալիքները, աշխարհը և ապագան տեսնելու, ինչպես նաև նրանում **ինքնահրականացվելու** անհրաժեշտությունը: Այսօրինակ խոսույթում հատուկ շեշտադրվում է «քաղաքական ռազմավորական մտածողություն ունեցող ինտելեկտուալ գործիչների» դերն աշխարհաքաղաքական պատկերների կառուցման գործում [6, c. 247]: Զարգացման նշված միտումները ստեղծել են հետևյալ հիմնախնդիրները. **առաջին՝** համաշխարհային քաղաքականության մեջ տուրբուլենտության ոչ միանշանակ մեկնաբանությունը հավասարության գծեր է դնում նրա և այնպիսի խառնածին հասկացությունների միջև, ինչպիսիք են «**ճգնաժամ**», «**քաոս**», «**ռիսկ**», «**սպառնալիք**» և այլն: **Երկրորդ՝** խնդիր կա «տուրբուլենտության» հայեցակարգը, որպես քաղաքական գործիք օգտագործել թատերականացնել քաղաքական կեղծ օրակարգերը և լեգիտիմացնել ապակառուցողական քաղաքականությունը: **Երրորդ՝** առկա է դերակատարների «Ես»-ի կայացվածության և նպատակամետ գործառման հիմնախնդիր: **Չորրորդ՝** ծավալվող խոսույթը պայմանավորված է «օբյեկտիվ» և անկախ դերակատարների ակտիվությունից, թե տուրբուլենտությունը կարող է նախագծվել և փոխվել համաշխարհային քաղաքականության դերակատարների ռազմավարությունների ազդեցության ներքո [7, c. 4-5]: Ասվածի շրջանակում անընդհատ տատանվող հոսանքներին չտրվելու, ինչպես նաև քաղաքական դեմագոգիայից խուսափելու և ժամանակի պահանջներին համապատասխան խոսույթ վարելու համար անհրաժեշտ է տարբերակել թե ինչպես է արդիականանում << կառավարող դասը և լիդերության ինստիտուտը: Միայն այդպես կարելի է պարզել քաղաքական խոսույթի իրական կամ կեղծ լինելը, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլում քաղաքական գործիչները հանրային կապեր հաստատելու **Ֆրեյմինգավորած ներկայացնելու լայն հնարավորություններ ունեն:** Այստեղից էլ՝ տուրբուլենտությունն արդի համաշխարհային քաղաքականությունում գերիշխող այն խոսույթներից է, որը բարեփոխումների ձգտող ուժերի ռազմավարությունների միջև առճակատում է սերմանում և հենց դրանով քաղաքական խոսույթ է բերվում «հիբրիդային» պատերազմի նոր հայեցակարգեր, քաղաքական պրակտիկաներ և տեխնոլոգիաներ: Այդ համատեքստում, քաղաքական տուրբուլենտությունը, ներառելով

աշխարհաքաղաքական և արժեքային փոփոխություններ, իր խոսույթային դրսևորումներով որոշում է թե որոնք են կառավարող և ընդդիմադիր ուժերի լեգիտիմության սահմանները, մրցակցության և անհանդուրժողականության ռազմավարությունները: Ավելին, ռուս հետազոտող Վ. Պանտինն առանձնացնում է քաղաքատնտեսական, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական խոսույթային խաղարկումների (**մանիպուլյացիաների**) հետևյալ հիմնական պատճառները՝ սոցիալ-բնապահպանական համաշխարհային ճգնաժամ, գլոբալ ժողովրդագրական աճի դինամիկայի կտրուկ անհամաչափություններ, միջէթնիկական հակամարտությունների սրում, կլիմայի գլոբալ փոփոխություն [4, c. 8]: Համաձայնելով ռուս հետազոտողի հետ՝ կավելացնենք նաև աշխարհաքաղաքական փոփոխությունների ակնկալիքով սանձազերծած լոկալ պատերազմներ, ինչպես նաև «ուժի բևեռների» կողմից իրենց արտաքին քաղաքականության մեջ մարդասիրության բաղադրիչի խաղային բնույթը:

Հանրագումարենք. **քաղաքական տուրբուլենտությունը, որպես աշխարհակարգի ցանցային փոփոխությունների գործընթաց, բնութագրվում է մշտական անկայունությամբ, անորոշությամբ ու վիրտուալությամբ, որը պարբերաբար խաղարկվում է գլոբալ քաղաքականության դերակատարների կողմից, եթե ազգային ընտրանին կառավարման իր արժեքաբանության հիմքում չի դնում բազմամակարդակ խոսույթ վարելու և բնականոն արդիականանալու ռազմավարությունը:**

***Քաղաքական տուրբուլենտությունը որպես հնարավորություն
ՀՀ-ի բնական արդիականացման համար***

Հայաստանում քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, ավանդական և արդի արժեքներ կրողների ու արարողների և իշխանության ինստիտուտների միջև քաղաքական փոխազդեցությունների բազմաչափ ու բարդ խճանկար է: Դա է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, լեգիտիմություն (**օրինականություն**), ինքնություն) ճգնաժամների հաղթահարումը ձգձգվում է, ինչի հետևանքով քաղաքական ընդդիմությունը հանդես է գալիս որպես հեղափոխական շարժում, այլ ոչ թե բարեփոխիչ ուժ: Դրանով է բացատրվում, որ քաղաքական տուրբուլենտությամբ պայմանավորված հայ հասարակությունում զուգահեռ ընթացող «արևմտականացումը» և «վազող արդիականացումը» ծնեցին ներքուստ խորը տարբերակված օտարում՝ խորացնելով գոյաբանական և արժեքաբանական անորոշությունները: Երևույթն ավելի խորացավ, երբ ՀՀ-ում պետական իշխանության և իշխանական հարաբերությունների բարեփոխումային քաղաքականությունը իրականացվում էր «փորձի և սխալի» հարացույցի շրջանակներում: Մինչդեռ իր ժամանակին է. Դյուրքհեյմը բանաձևել էր,

որ հասարաքաղաքական անորոշությունների հաղթահարման գործընթացում «գիտությունը կարող է օգնել մեզ գտնելու այն ուղղությունը, որով մենք պետք է հստակեցնենք մեր վարքագիծը, որոշենք մեր իդեալը» [8, c. 41], իսկ ըստ Ռ. Մերտոնի՝ անորոշությամբ պայմանավորված անոմիան հասարակության ինստիտուտների անգործունակության և դիսֆունկցիոնալության հետևանք է, ինչը մշակութային նպատակների միջև հանգեցրել է հակասությունների, որոնք մարդկանց կողմնորոշում են դեպի «այդ նպատակներին հասնելու համար ընդունելի ուղիներ» [9, c. 118]: Այս ելակետային մոտեցմամբ էլ կարևորենք ՀՀ-ում ընթացող **«որոշակիության ավարտի» տիրույթներում տեղի ունեցող** արժեքային (եկեղեցի, ավանդույթ, ազատության բարոյականություն, մարդասիրություն) կողմնորոշումների, նորմերի և կանոնների վերարժևորումը: Այդ վերարժևորումների փոթորկայնությամբ և «փորձի և սխալի» հարացուցի շրջանակներում իրականացվող վերլուծությամբ անհնար է իսկության մեջ ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի ապահովման և հասարակության զարգացման ռազմավարություններ մշակել: Այստեղ պետք է հասարակական գիտակցության մեջ ամրագրել մարտահրավերների, սպառնալիքների և ռիսկերի աստիճանը՝ մերժելով **«ոչինչ բացարձակ չէ, անհրաժեշտ է թեթև ապրել»** կենսաձևը: Վերջինս պատմության հոլովույթում փոխանցված սոցիո և էթնո մշակութային ուղենիշներն ուղարկվելով սոցիալական հիշողության արխիվ՝ հնարավորություն է տալիս չհիմնավորված ամբիցիաներով (**նկրտումներով**) մարդկանց պնդել կարծիքը՝ անտեսելով հանրային համակեցությունը և շահերը: Հետևաբար, եթե ՀՀ-ում **«թավշյան հեղափոխության»** երևույթի արդյունավետության գնահատմամբ փորձենք վերլուծել պետական և հանրային ինստիտուտների ֆունկցիոնալ գործունակության մակարդակը, ապա ակնհայտ է, որ նմանօրինակ արդիականացումը չի ապահովում ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի ոչ մի սկզբունք: Փաստ է, որ մշակութային տրավմայի տեսքով տեղի ունեցավ գլխապտույտ փոփոխություններ, որն ուղեկցվեց սոցիալական ցանցավորված իրականության վիրտուալացմամբ և հասարակական կյանքի բոլոր ոլորտների տուրբուլենտությամբ: Այս ամենի արդյունքում «հետճշմարտության (Post Truth).» օգնությամբ ՀՀ-ում անընդհատ վերարժևորվեց և քառասյանացվեց պետության ինստիտուտի, առանց այն էլ երկարատև քաղաքական զարգացման ճգնաժամերի հետևանքով անկման մեջ գտնվող վարկանիշը: Ավելին, առաջ տանելով սեփական կարծիքը և խմբային շահը «հետճշմարտության» օգնությամբ «կերակրեցին» քաղաքացիներին կեղծ օրակարգերով՝ հատկապես կուլակաթափության և չմշակեցին ու չիրականացրեցին գերշահույթի ու

մենաշնորհի դեմ պայքարի ծրագիր: Հենվելով «հետճշմարտություն» երևույթի հուզականության և վախը, հակակրանքը, ատելությունը, նախնիների վերադարձը որպես սպառնալիք ներկայացնելու վրա «սպիտակները» կեղծ լուրերի (fake news) տեխնոլոգիայի կիրառման միջոցով ՀՀ-ում քաղաքական գործընթացները հանգեցրին անորոշության: Կեղծ լուրերը վտանգավոր են, քանի որ աղավաղված նորությունները սկսում են գերիշխել տեղեկատվական տարածքում որպես սենսացիոն հաղորդագրություններ և դրանց շուրջ ծավալվում է քննարկում, որը հեռու է իրական խնդիրների քննարկումից: Այս համատեքստում ազգային անվտանգության ընդարձակ օրակարգի ապահովումը ՀՀ-ում բախվել է քաղաքական տուրբուլենտությունը հայեցակարգելու խնդիրներին՝ համաշխարհային քաղաքականության տեկտոնական փոփոխություններին համարժեք (**ադեկվատ**) բնականոն արդիականացնել ազգային քաղաքական համակարգի գերակա ինստիտուտը՝ պետությունը և պետական իշխանությունը:

Ռոսենաուն, վերլուծելով քաղաքական տուրբուլենտությունը որպես մարտահրավերների համակարգ, այն դիտարկեց նաև որպես հնարավորություն: Այս համատեքստում, համաձայնելով հեղինակի հետ, շեշտադրենք, որ տուրբուլենտ իրավիճակները հնարավորություն են տալիս մոդելավորել փոփոխությունների ելքը միայն բնականոն արդիականացման, ներածին պոլիարխիկ ընտրանիների առկայությամբ: Եթե փոփոխություններն ուղեկցվում են գունավոր հեղափոխությամբ, ապա ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակը քայքայում է պետականությունը և պետական իշխանությունը, իսկ քաղաքական թույլ գիտակցություն ունեցող մարզիկները հասարակությունը լյուծպենիզացնում են: Այս դիտանկյունից «թավշյա հեղափոխության» լիդերը ի սկզբանե ՀՀ-ում առկա քաղաքական անորոշությունները կառավարելու համար պետք է գիտավերլուծական հարացույցի գործառնամամբ ներդաշնակեր գլոբալ և գլոկալ զարգացման արժեքաբանությունը և կանխատեսեր ռիսկերը՝ ապահովելով ազգային անվտանգության ընդարձակված օրակարգ: Այդ նպատակող անհրաժեշտ էր ՀՀ հասարակությունը բաժանել ոչ թե «սևերի» և «սպիտակների» այլ առանձնացնել ժողովրդավարական անցման նոր փուլում անկայունություն ծնող պատճառները, տարբեր սոցիալական խմբերի շահերի հավասարակշռության խախտման վտանգները, ինչպես նաև հանկեցության կանոններն անտեսող խաղարկման բարձր մակարդակ: Հետևաբար, անվտանգ գոյատևման և աշխարհի խառնաշփոթության հաղթահարման համար անհրաժեշտ է, որ **ապագայամետ լիդերները կերտեն նպատակի մշակույթ (Future-Focused Leaders Create Cultures of Purpose):**

Համոզված ենք, որ այդ գործընթացների ուսումնասիրումը ՀՀ-ում «գիտավերլուծական» հարացույցի օգնությամբ հնարավորություն կտա

հավաքագրել նորարար մտածողություն ունեցող այն սոցիալական ուժերին, որոնք կարող են ապահովել նպատակամեն և բնականոն արդիականացում: Նմանօրինակ մոտեցումը հիմնավորում ենք՝ նկատի ունենալով զարգացող երկրներում (նաև ՀՀ-ում) գրանցված այլընտրանքային ազատությունների արդյունքներն ապացուցում են, որ այսօր ռիսկային գոտում են մնացել քաղաքական զարգացման ճգնաժամերի մեջ գտնվող այն երկրները, որոնք բնականոն արդիականացման փոխարեն ընտրում են գունավոր հեղափոխության ուղին: Իսկ վերջինս, որպես հանուն **«ժողովրդավարության ժողովրդավարացման»** բազմաչափ շիթային գործընթաց, ղեկավարվում է **ինքնաներկայացմամբ** հանդես եկող **«ռիսկի մարդու»** կողմից: Բոլոր պատմական **ժամանակներում էլ** այլընտրանքային ազատությունների և անարդարության դեմ պայքարի ջատագով **«ռիսկի մարդու»** գործողությունները հասարակության համար եղել են երկիմաստ՝ և՛ ֆունկցիոնալ, և՛ դիսֆունկցիոնալ: Բայց, խաղարկելով արդեն հեղափոխականացված զանգվածների, հատկապես երիտասարդության վարքը, **«ռիսկի մարդը» շահադրդում է նրանց և ռիսկի կամավոր ընդունմամբ** (ռիսկոֆիլիա) դարձնում նրանց անպատասխանատու ազատության կրող և արարող [10, c. 66-67]: Այս համատեքստում, ունենալով քաղաքական սոցիալականացման և գիտակցության տարբեր մակարդակներ, արդեն հեղափոխականացված երիտասարդությունը, գործընթացների արագացման ակնկալիքով՝ օգտագործելով բազմամակարդակ տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաները, ապակայունացնում են քաղաքական դաշտը և նպաստում են քառտիկ իրավիճակի առաջացմանը: Մասնագիտական գրականության մեջ ուշագրավ է քաղաքական տուրբուլենտությունը որպես **««ռիսկի մարդու» կողմից օգտագործվող ամբոխահաճություն (պոպուլիզմ) և ընդհանրապես քառսային այլակարծություն ծնող նկրտումային»** երևույթ ներկայացրելու ԱՄՆ քաղաքագետների փորձերը՝ շեշտադրելով համացանցում տարբեր միկրոբլոգների աններդաշնակ վիրտուալ ազդեցությունը քաղաքական մոբիլիզացիայի վրա [11]: Ըստ այդ հետազոտության՝ գլոբալ մակարդակում մարդիկ իրենց ազատ ժամանակի 60% իրականացնում են համացանցային հարթակում՝ օգտագործելով Twitter-ը և Facebook-ը: Հենց այս պատճառով է, որ աշխարհում կատարվող նմանատիպ բազմակիության (պլուրալիստական) գործողությունները ստեղծում են շղթայական կապեր և խթանելով ժողովրդավարական բազմակարծության մոդելը քառսային իրավիճակ են ստեղծում [11]: Արդյունքում, ազգային ցնցումները և հեղափոխություններն ուղեկցվում են «ուժային բևեռների» շահերից բխող աշխարհաքաղաքական ամենահավանական փոփոխություններով: Ավելին, այդ նպատակի համար ակտիվ գործունեություն է ծավալում «փափուկ ուժը»՝ կանխավ տուրբուլենտ ալիքներ ստեղծելով և տարածելով բազմաչափ տարածություն սոցիալական մեդիայի հարթակում՝ ձևավորելով **արդար (հերոս) լիդերի բյուրեղային, խարիզմայով հագեցած կերպար**: Ավելին, նման լիդերը, վերլուծելով քաղաքականության դերակատարների վարքի շարժառիթները, որպես տուրբուլենտության խաղարկող, «խաղում է»

տարբեր եղանակներով՝ թիրախավորելով պատմական հիշողությունը, վերաժևորելով հերոսների և դավաճանների կերպարները, անվտանգության ապահովումը, ինչպես նաև ազգային, քաղաքական և քաղաքացիական ինքնությունը: Միաժամանակ հանրության ուշադրությունը սևեռելով նախնիների բացթողումների և սխալների վրա՝ մշակում են ազատության, կյանքի որակի և մակարդակի, ինչպես ազգային անվտանգության ապահովման նոր սցենարներ: Այս տեխնոլոգիաները նոր չեն, բայց սոցիալական ցանցերի զարգացման արդյունքում խաղարկողները միշտ «ցնցում են» այն արժեքները, որոնք «վազելով» արդիականացվում են հասարակության գիտակցության մեջ:

Հանրագումարենք. նախ տուրբուլենտության ստեղծած քաոսը խաղարկողներին հնարավորություն է տալիս տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների ցանցային կիրառմամբ փոխել գործընթացի տրամաբանությունը՝ խրախուսելով չհիմնավորված նկրտումներով անձանց անպատասխանատու գործունեությունը: Այսպես, ՀՀ-ում 2018 թվականի ապրիլ-մայիսյան քաղաքական անհնազանդության փորձը հաջողություն ունեցավ, քանի որ ակցիայի կազմակերպիչները հրաշալիորեն տիրապետում էին սոցիալական մեդիայի գործիքներին, իսկ հասարակությունն անմիջական կապ էր կարողանում հաստատել Նիկոլ Փաշինյանի և իր թիմակիցների հետ: Հրապուրված պատրանքային ազատությամբ՝ առկա վարչակարգից «սպասումների հիասթափության» մեջ գտնվող և ցածր քաղաքական գիտակցություն ունեցող ապստամբ զանգվածները, ինչպես նաև նոր ուժից մեծ ակնկալիքներ ունեցող երիտասարդությունը քննադատաբար չվերաբերեցին քաղաքական խոստումներին՝ անտեսելով ազգային անվտանգությանը սպառնացող վիրտուալության և անորոշություն ծնող անհնազանդության կոչերի ապարակողմնորոշող հնարավորությունները: «**Թավշյա հեղափոխությունից**» հետո, սոցիալական մեդիայում գերապատվությունը տրվեց ոչ թե հանրային, այլ տարաբնույթ խմբային շահեր և արժեքներ արտահայտող մանիպուլյատիվ ու ագրեսիվ խոսույթին: Այսօր սոցմեդիայում խրախուսում է ագրեսիվ խոսույթը. մարդիկ իրականում **Twitter** -ում և **Facebook** - ում հավանելով, հետևելով, կիսվելով, ներբեռնելով և պնդելով իրենց կարծիքը, մեծացնում են քաղաքական գործընթացների տուրբուլենտ ընկալումը: Ըստ ամերիկացի քաղաքագետների՝ տեղեկահաղորդակցական նոր տեխնոլոգիայի զարգացմամբ պայմանավորված բազմակարծությունը ժողովրդավարության այն մոդելն է, որն քաղաքականության իրականացման քաոսային ձև է [11]:

Փաստորեն տուրբուլենտությունը պայմանավորված է հայ հասարակության վրա տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների աճող ցանցային քաոսի ու վիրտուալության ազդեցությամբ: Մի դեպքում բնակչության սպասումների զգացմունքային բարձր մակարդակը, օտագործելով տեխնոլոգները, ընդարձակեցին հեղափոխականության սոցիալական տարածությունը՝ հիմնականում նպաստելով մարզինալ, օտարված զանգվածների, ինչպես նաև՝ հիմնավորված կամ չհիմնավորված նկրտումներ ունեցող երիտասարդության մասնակցությանը: Ի սկզբանե ակնհայտ

էր, որ «թավշյա» հեղափոխության մասնակիցների մի զգալի մասի համար սոցիալական վարքի արևմտյան մոդելի արժեքները վերացական էին, քանի որ, չունենալով անհատի գործունյա ու ակտիվ կողմնորոշում, իրատեսական լավատեսության հոգեբանություն ու ձեռնարկատիրական-նախաձեռնողական ավանդույթներ, նրանք ուղղակի ցանկանում էին լավ ապրել՝ մերժելով փոխհամաձայնեցված խմբիշխանական վարչակարգը:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում զուգահեռ ընթացող մեխանիկական «արևմտականացման» և «վազող արդիականացման» խորքային խզումների (բախումների) հետևանքով քաղաքական զարգացման նեոլիբերալ դերակատարները մերժեցին ազգային, քաղաքական և քաղաքացիական ինքնության բնականոն արդիականացման միջոցով տուրբուլենտության մարտահրավերներին պատասխանելու հնարավորությունը: Ավելին, առանձին մարզինալ խմբերի ինքնարտահայտումը տեղի է ունեցել այսպես կոչված **մարզինալացված արդիականացման** ձգտող պոպուլիստական ընտրախավային խմբերի տեսքով: Մեր կարծիքով ՀՀ-ում քաղաքական տուրբուլենտության հնարավորությունները որոշվում են այն հանգամանքով, թե ի վիճակի է վարչակարգը լուծելու ինչպես ընդհանուր, այնպես էլ ազգային բնույթի հետևյալ խնդիրները.

1. հրաժարվել մեխանիկական «արևմտականացումից» և գիտավերլուծական կառավարման միջոցով անցում կատարել բնականոն արդիականացման՝ իրականացնելով ազգային անվտանգության ապահովման ընդարձակված օրակարգ:

2. խստացնել մենաշնորհի և գերշահույթի դեմ ուղղված օրենքների կիրառումը՝ ապահովելով կապիտալի լեգիտիմացման ազատ մրցակցային դաշտի արդյունավետ գործառում, ինչպես նաև սոցիալական պատասխանատվության գործառումը,

3. քաղաքական և քաղաքացիական հասարակությունների միջև բաց դիրսկուրսի ծավալման նպատակով բարձրացնել իշխանության իրականացման մշակույթը և ժողովրդավարության որակը,

4. ապագայամետ լիդերները կերտում է նպատակի մշակույթ՝ այն դիտարկելով որպես պետականաշինության մշակույթի զարգացման և ժողովրդավարական համախմբման հրամայական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Rosenau J. N.**, Turbulence in World Politics: A Theory of Change and Continuity.. Princeton, New Jersey: Princeton University Press, 1990. Pp. 480,

2. **Януцкий О. Н.**, Вызовы и риски глобализации. Семь тезисов // Социологические исследования. 2019. № 1. с. 29-39.

3. **Талей Н. Н.**, Черный лебедь. Под знаком непредсказуемости. / Переводчики: В. Сонькин, А. Бердичевский, М. Костионова, О. Попов .М.: Колибри, 2009.

4. **Пантин В. И.**, Первая половина XXI века: «эпоха турбулентности» в мировом развитии, История и современность, N.2, .2008.

5. **Maull H.W.**, World Politics in Turbulence // Internationale Politik und Gesellschaft Online. Berlin:2011. N.1, http://library.fes.de/pdf-files/ipg/ipg-2011-1/2011-1_03_a_maull.pdf

6. **Фуко М.**, Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности. Работы разных лет. - М., Касталь, 1996. -448 с.

7. **Сергеевич П. Д.**, Турбулентность в современной мировой политике: дискурсы и практика, М.: 2016.

8. **Дюркгейм Э.**, О разделении общественного труда / Пер. с фр. А.Б. Гофмана, примечания В.В. Сапова. М.: Канон,1996.

9. **Мертон Р.**, Социальная теория и социальная структура. М.: АСТ, 2006.

10. «Нормальная аномия» в России и современном мире: коллективная монография / [Н.Н. Зарубина и др.]; под об. ред. С.А. Кравченко ; М.: МГИМО-Университет, 2017.

11. Political Turbulence: How Social Media Shape Collective Action Helen Margetts, Peter John, Scott Hale, Taha Yasseri, 2016 <https://muse.jhu.edu/book/64512> Helen Margetts.

ПОЛИТИЧЕСКАЯ ТУРБУЛЕНТНОСТЬ: ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ ЭВОЛЮЦИОННОЙ МОДЕРНИЗАЦИИ АРМЕНИИ

МАРИАМ МАРГАРЯН, МАМИКОН МАРГАРЯН

Академия государственного управления Республики Армения

Авторы обосновывают многовекторную сущность политической турбулентности в контексте текущих процессов глобализации, глокализации, гибридных войн, геополитических трансформаций, терроризма, борьбы против Covid-19, а также целенаправленного применения современной техники информационно-коммуникационных технологий. В данном контексте, в статье предлагается изучение политической турбулентности не только как вызова, но также и возможности эволюционной модернизации социально-политической жизни. Авторы убеждены, что данный подход позволяет выявить деструктивное влияние кризисов политического развития на публичное управление, национальную безопасность, экономику, экологию, правовую систему и даже нравственность. С этой точки зрения, в статье исследуется сущность турбулентности в Армении на основании научно-аналитической парадигмы, подчеркивая стратегический характер политического дискурса. Наряду с этим, авторы развивают подход, согласно которому научно-аналитическая парадигма в Армении может быть внедрена только путем набора эндогенных элит со стратегическим мышлением, которые путем эволюционной модернизации смогут осуществить конвергенцию общественных, государственных и национальных интересов, а также политику социальной ответственности, общественного консенсуса и стратегического и безопасного будущего.

Ключевые слова: политическая турбулентность, вызов, возможность, геополитика, эволюционная модернизация, стратегическое мышление, неопределенность, манипуляция, эндогенные элиты.

**POLITICAL TURBULENCE: CHALLENGES AND OPPORTUNITIES FOR
EVOLUTIONARY MODERNIZATION OF ARMENIA**

MARIAM MARGARYAN, MAMIKON MARGARYAN

Public Administration Academy of the Republic of Armenia

The authors have argued the multivector essence of political turbulence in the context of the current processes of globalization, glocalization, hybrid warfare, geopolitical transformations, terrorism, fight against Covid-19, as well deliberate application of modern techniques of the ICT. From this perspective, the article suggests studying political turbulence not only as a challenge, but also an opportunity for evolutionary modernization of the socio-political life. The authors are convinced that the approach allows revealing the destructive effects of the crises of political development on public governance, national security, economy, ecology, legal system, and even moral. From this point of view the article researches the essence of turbulence in Armenia based on scientific-analytical paradigm, by stressing the strategic character of political discourse. Additionally, the authors are developing an approach according to which scientific-analytical paradigm in Armenia can be developed only by recruiting endogenous elites with strategic mindset, which by evolutionary modernization can implement convergence of public, state, and national interests, as well as policy of social responsibility, public consensus and strategic and secure future.

Keywords: political turbulence, challenge, opportunity, geopolitics, evolutionary modernization, strategic thinking, uncertainty, manipulation, endogenous elites.

*Ներկայացվել է խմբագրություն 16.11.2020
Երաշխավորվել է տպագրության 02.12.2020*